



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.71-2

9-75

3442

-05

STANDARD 441 100

B.T.O.

2003

2003

ՓԼԿՈՒՆԾ ԴՐՆՆ ՄՕՏ



Հայկական թատրոն

✓ 9

ՓԵՆՍԻԱԿԱՆ ԳՐԱՆ ՄՈՏ

№ 9128

ՊԱՏԿԵՐ — ՄԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

891.71-2
9-75

Հեղ. ՊԵՏՐ ԳՕԼՈՒԲԻՆ

Թարգմանաբիւն

Վ. Տէր Գրիգորեանցի



1001
564

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Յովհաննէս Վարդիրոսեանցի տպարան

1879

997

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԱՍԿՈՎԱ

ՊՐԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Дозволено Цензурою. Тифлисъ, 8 Октяб. 1879 г

ՊՐԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ս 1 1 8 1 4

Тип. И. Мартиросянца, на Орбелиан. ул. д. № 5

9581

ՓԼԿՈՒՆԾ ԴՐԱՆ, ՄՈՏ

ՊԱՏԿԵՐ—ՄԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁՆ

Վ.ԱՐԳՈՒՆԻ, նոր ամուսնացած կին:

Մտքուր հերասնեակ, աջ կողմը պատուհան, ձախ կողմը և մէջտեղը դռներ: Եւան, բազկաթուռներ և աթուռներ: Վառարան ժամացոյցով:

Վարագոյրի բարձրանալու ժամանակ Վարդուշին պատկած է դիւանի վրայ, որի մօտ դրված է փոքրիկ սեղան վրայ լամպայով: Իւր կարգաւու ժամանակ տիկինը քնել է, գերբը նրա ձեռքից դուրս է ընկել: Անքանի վայրկեան երածշաութիւնը մի մեղմ եղանակ է նուազում:

Վ.ԱՐԳՈՒՆԻ, զարթելով և աչքերը սրբելով.

Այս ի՞նչ է, կարծեմ քունս տարել էր . . .
Իսկ գիրքս ո՞ւր է . . . Աա՛, տեսնում եմ . . .
ձեռքիցս ընկել է . . . (Վերջնելով գերբը.) Խեղճ
իմ գրքոյի, ների՛ր ինձ . . . Ես սկսեցի քեզ կար-
դալ յուսալով թէ ձանձրութիւնս կ'անցնի . . .
Այո, յիշում եմ, առաջին գլխի մէջ նկարագրուած
է գիւղական պարտէզ. զարեո՛ր ծառերով լի. լուս-

նեակի պայծառ լոյսը ընկել է երկու սիրահարների վրայ, որոնք ձեռք ձեռքի տուած զբօսնում են պարտէզի մէջ. նոքա քնքշաբար մօտեցել էին միմեանց և ցածր խօսում էին . . . յետո՛յ, յետոյ էլ ոչինչ չեմ յիշում . . . ամեն բան մի տեսակ քողով ծածկվեցաւ: (Մտածում է.) Երևի շատ գեղեցիկ են այդպիսի բանաստեղծական վառ սիրով լի գիշերները: (Հառաչում է.) Բայց այդ բաները երևի միայն բոմանների մէջ են պատահում, կեանքը բոլորովին ուրիշ կերպ է . . . Ա՛յ օրինակ, մենք. իմ ամուսինն էլ ինձ սիրում է, սաստիկ է սիրում. մեր հարսանիքից յետոյ արդէն երեք ամիս անցել է, իսկ նա դարձեալ քնքոյշ է դէպի ինձ, դարձեալ ուշադիր է . . . բայց այդ նոյն բանը չէ: (Ներկայացնելով լը ամուսինն.) «Ախ Վարդուհի, հոգիս, շուտով թէյ տուր, ծառայութիւն գնալու ժամանակ է . . . այդ ի՞նչ է, Մարիամը դեռ կօշիկներս չէ սրբել»: Ես կը կամենայի գրկել նրան, պինտ գրկել, իսկ նա կօշիկների մասին է խօսում: Ծառայութենից գալիս է՝ «Քաղցած եմ», «գիշերը՝ «ըռնս տանում է», միշտ կամ անհանգիստ է լինում, կամ յոգնած . . . Մանաւանդ վերջին ժամանակները, արդէն երեք օր է որ ես նրա մէջ մի բան եմ նկատում . . . նա մտատանջութեան մէջ է, իմ հարցերին անկապ պատասխաններ է տալիս, բանկից միշտ ուշ է վերադառնում . . . իմ ամուսինը ծառայում է մեր քաղաքի բանկերից մէկում, իսկ այնտեղ գիտէք ինչպիսի բաներ են պատահում . . . մարդ ակամայ սարսափ է զգում. (Վանդ է աւնում:) Այսօր, օրինակ, խոստացաւ մինչև հինգ

ժամը գալ ճաշի, շատ շատ մինչև վեցը. լաւ, խըփում է վեցը, չկայ, խփում է եօթը, ութը, ինը, տասը, տասնումէկ (Ժամացոյցը խփում է 12:) 1 սո՞ւմ էք, մինչև անգամ տասներկուսը խփեց . . . Հասկացէք, կէս գիշեր է, ուրուականների ժամը, էլ ի՞նչ ճաշի ժամանակ է. օրինաւոր մարդիկ արդէն քնած են, իսկ իմ անպիտան Յովհաննէսը չկայ ու չկայ: (Վեր է կենում գիւանից և յուզուած մտն է դալիս.) Ի՞նչպէս էք հաւանում այսպիսի վարմունքը . . . Չէ, տղամարդկերանց չէ կարելի հաւատալ. բոլորն էլ միատեսակ են նրանք, իմ ամուսինն էլ նոյնն է: Արի՛ ու սրանից յետոյ ամուսնացիր . . . Աւելի լաւ կը լինէր որ ես իմ մօր հետ ապրէիք . . . Թէ այսպէս չարչարուէի ու տանջուէի . . . բայց ի՞նչպէս կարող էի մտածել, որ Յովհաննէսը կարող էր այդպէս վարուել . . . Երբ պատահում էր որ ինձ ասում էին, թէ ոչ մի տղամարդի վրայ յոյս չէ կարելի դնել, ես չէի հաւատում, ես կարծում էի թէ իմ ամուսինը բացառութիւն է կազմում, բայց հիմա փորձով տեսնում եմ . . . Ժամը մէկն է և նա դեռ չէ երևում. — այս ի՞նչ անկարգութիւն է . . . Ոչինչ չասել, չնախադգուշացնել և միայնակ թողնել . . . Ես նրան ի՞նչ եմ արել, որ նա ինձ հետ այսպէս է վարվում . . . (Լաց է լինում: Ա՛խ Տէ՛ր Աստուած, ինչի՞ ես ինձ պատժում: (Փոքր կանգ առնելուց յետոյ ձայնը փոխում է:) Որ այդպէս է, ես էլ չեմ կոտրուի. ցոյց կը տամ որ հաստատ բնաւորութիւն ունիմ . . . Այո, ես վճռել եմ . . . ի՞նչ հարկաւոր են արտասուքներ, գանգատներ, յանդիմանութիւններ, ես նրանից

վրէժ կ'առնեմ . . . այնպիսի բան կը հնարեմ, որ նրան յետ կը սովորեցնէ կէս զիշերին դուրս մնալ՝ եկէք հիմա, պարոն, եկէք տեսնեմ. այստեղ այնպիսի դրամայի կը պատահիք, որ չէք էլ երևակայում: Կարծո՞ւմ էք ոչինչ չի լինի . . . կը տեսնէ՞ք . . . ես ձեզ այնպիսի սառնութեամբ կ'ընդունիմ, այնպիսի սառնութեամբ, որի առաջ բեւեռային սառույցները արևադարձի շքեր կ'երևան, ձեր երակների արիւնը կը սառչի, պարոն . . . Ես . . . ես . . . չէ, ես նրան ոչինչ չեմ ասի . . . Երեսու շուռ կը տամ, նրա ոչ մի խօսքին չեմ պատասխանի, գերեզմանային լուսթիւն կը պահեմ: Եւ ճշմարիտ, ի՞նչ կարող եմ ասել նրան . . . Գուք անպիտան էք, սիրելիս, դուք հրէշ էք, իմ հրեշտակ, իսկ նա գուցէ կը ծիծաղի և իմ դրամատիկական վարմունքի տպաւորութիւնը կը կորչի . . . (Նստում է և մի քիչ կանգ առնելուց յետոյ շարունակում է.) Չէ գալիս էլի . . . էլի շատ պէտք է սպասեմ . . . Այս ի՞նչ պատիժ է, Տէր Աստուած, մինչև առաւօտ պէտք է մենակ նստեմ . . . ես կը հիւանդանամ . . . զգում եմ, որ ոյժերս ինձ թողնում են . . . (Խտուրթեամբ.) Ես քաղցած եմ վերջապէս . . . նրան պատժելու համար ճաշի ժամանակ համարեա թէ ոչինչ չկերայ, որ ցոյց տամ նրան, թէ մենակ չեմ կարող ճաշել, իսկ հիմա . . . ես այնպէս քաղցած եմ, այնպէս քաղցած . . . բոլորը ձեր պատճառով, պարոն Յովհաննէս, ձեր պատճառով. այդպիսով դուք ինձ անկողին կը ձրգէք . . . Ախ, Տէր Աստուած, կարծես դրսից աղմուկ լսեցի: (Շուտով վեր է կենում բազմութեանը,

մտնելով է մէջտեղի դրանը և ականջ է դնում.) Ո՞վ է . . . (Նրան կէսը բայ է անում և նայում է.) Ոչ ոք չկայ . . . ես սխալուեցայ . . . ինձ երևաց որ . . . Դէ լաւ . . . եթէ այդպէս է, իմ սիրելի ամուսին, ես ձեզ մի սիրալիրիկ կը պատրաստեմ . . . սպասեցէք, ես ձեզ ի՞նչ կ'անեմ . . . (Գուռը փակում է և բանալին հանում.) Երբ որ յետ կը դառնաք, դուռը փակած կը լինի, և դուք նախասենեակում, չոր նստարանի վրայ կը քնէք . . . (Ատածելով.) Միայն մի բանից եմ վախենում, կըսկսի դուռը ծեծել, կը խնդրէ, իսկ ես սիրտ չեմ անի մերժելու, մէկ էլ տեսար շաքարի պէս հալվեցայ . . . Այո, ես զգում եմ, զիտեմ որ չեմ համբերի և դուռը բաց կ'անեմ . . . (Վաւորաբար.) Որ այդպէս է, չեմ ուզում, չեմ կամենում նրան զիջողութիւն անել: Ար վերցնեմ բանալին այնպիսի տեղ կը ձգեմ, որ յետոյ անկարելի լինի գտնել: (Յոյց է տալիս բանալին) կը ձգեմ, կը ձգես, անպատճառ կը ձգեմ: (Բանալին ձգում է մի անկիւն, մտածելուց յետոյ.) Բայց ի՞նչ դարմանալի բան է- այս բոպէիս, երբ ես վրձուեցի նրան պատժել, ես ինձ լաւ էի դրում, ուրախ էի, իսկ հիմա մի տեսակ անհանգստութիւն է փրբել ինձ, բոլոր մարմինս դողում է . . . Չլինի՞ թէ մի անբաղդութիւն է եկել նրա գլխին . . . Չլինի թէ մի ձախորդութեան է հանդիպել, գուցէ տաքացել է, մի այնպիսի բան է ասել, որ նրան կալանաւորել են . . . ոչ, այդ անկարելի է, ոչ . . . (Լուսթիւն, շքում է բեմի վրայ և յանկարծ կանգնում է.) Տէր Աստուած, ի՞նչ սարսափելի բան անցաւ մտքիցս այս բոպէին . . . գուցէ բանկում փող

է պակասել . . . գողութիւն, կամ ինչպէս հիմա
ասում են, վատնումն է յայտնուել . . . և կարելի
է իմ վանօի վրայ են կասկած տանում . . . (Սբաղու-
թեամբ.) Ես ուրախ եմ լինում երբ նրան վանօ
եմ անուանում . . . Յանկարծ նրան կը բանտար-
կեն, դատաստանի կ'ենթարկեն, վատտաբանը յի-
մար բաներ կը խօսի, և իմ վանօին Սիբիր կ'ու-
ղարկեն . . .

Ես նրանից չեմ հեռանալ, ես նրա հետ Սիբիր
էլ կ'երթամ, Ես նրան կ'ասեմ, վանօ', ես քե-
զանից տարաբաղդութեան ժամանակ չեմ բա-
ժանուի . . . է՛ն, ի՛նչ եմ յիմարացել, առաջինը
որ իմ ամուսինը աղնիւ ու բարի մարդ է և նրան
գողութեան մէջ ոչ ոք չի կասկածի. երկրորդ, նա
գանձապահ չէ, ուրեմն չէ էլ էլ կարող գողանալ, Հա-
շուապահների համեստ օգնականները չեն գողա-
նում . . . Ուրեմն ի՞նչ է պատահել . . . (Աղա-
ղակում է.) Ա՛հ . . . ի՞նչպէս այդ բանի մասին
առաջ չ'ատածեցի . . . նա կառքի տակ կը լինի
ընկած . . . նրա վրա կառք է անցել և ձիաները
նրան ջարդել են . . . նրա ձեռքը կտորել են . . .
նա ուշաթափ արիւնաթաթախ պառկած է մի որ
և է հիւանդանոցի մէջ . . . իսկ ես այստեղ բար-
կանում եմ նրա վրայ, յանդիմանում եմ նրան . . .
օ՛, անպիտան կին . . . ես ի՞նչ անեմ . . . պէտք է
մարդիկ կանչել, ուղարկել . . . խմանալ . . . (Վա-
զում է զբան կողմը: Զանգակի ձայն է լսվում: Կանգ-
նում է յանկարծակի ժպտով.) Նա է . . . (Գարձեալ
խիտ և մաշլ.) Ուրեմն ես ի զուր էի անհանդիստ
լինում . . . նա առողջ է, անվնաս է . . . (Սո

տենում է միջին զբանը և սկանջ է դնում:) Հարցնում
է Մարիամին, քնե՞լ եմ թէ չէ . . . (Կանգ է առ-
նում:) Նա պատասխանում է թէ քնած չեմ, թէ
այստեղ ճրագ կայ . . . վերարկուն և կալօշները
հանում է . . . զբանը մօտենում է, փորձում է
բաց անել, բայց կողպած է: (Մտքը բերանին է դը-
նում.) Մն . . . (Հեռանալով դռնից.) Ի՛նչպէս յան-
կարծ սիրտս սկսեց բաբախել . . . մի՞թէ ես
նրան խղճում եմ . . . չէ, չեմ կոտորւի . . . զի-
ջումն չեմ անի երբէք: (Գուռը բաղտում են: Նա մօ-
տենում է զբանը. խըն իրան.) Ծեծի՛ր, ծեծի՛ր դուռը:
(Նայում է բանալիի ձեխքից և սկանջ է դնում:) Նա
հարցնում է քնած եմ թէ չէ: (Բարձր.) Այո, պա-
րօն, այո, ես քնած եմ, խորը քնած եմ, մեռածի
նման քնած եմ, մանկական քնով քնած եմ: (Խըն
իրան.) Ա՛յ բան . . . (Սկանջ է դնում.) Երևակա-
յեցէք, նա ծիծաղում է . . . ինչպէս էք հաւա-
նում ա՛: (Բարձր.) Եւ դուք դեռ յանդգնում էք
ծիծաղել, չէ՞ք ամաչում, չէ՞ք խղճահարկում: (Ս-
կանջ է դնում.) Ի՞նչ է ասում . . . «սիրելիդ իմ,
հրաշալիդ իմ, պաշտելիդ իմ վարդուհի» . . . տա՛,
տա՛, տա՛, Ծատ անգամ ենք լսել այդ տե-
սակ քնքոյշ խօսքեր, հիմա զբանք անտեղի են:
Ո՞րտեղ էիք կորել, ասացէ՛ք, պատասխանեցէ՛ք:
(Սկանջ է դնում:) Չեմ բաց անի, ամենին չեմ բաց
անի . . . Քնեցէ՛ք նախասնեակում: (Նայելով բա-
նալիի ծակից.) Այս ի՞նչ է, նա լուցկի է վառում,
կպցնում է սիգարը, ախոռը դրանը մօտեցնում է
և նստում . . . լաւ, ես էլ միևնոյնը կ'անեմ:
(Բարկաթուռը մօտեցնում է զբանը:) Փակած դռնից էլ

կարելի է խօսել: (Նստում է:) Այսպէս աւելի լաւ է խօսել . . . (Երատական ձեռով.) Որովհետեւ ձեր գիշերային քաջագործութիւններից յետոյ ձեր դէմքը մաշուած կը լինի. իսկ ես չէի կամենալ ձեզ այնպէս տեսնել, իսկ դուք, Վանօ, կ'ամաչէիք իմ երեսին ուղիղ նայել: (Անտարբերութեամբ.) Խօսեցէ՛ք, ես ձեզ լսում եմ, արդարացրէ՛ք ձեզ . . . (Բարկացած.) Խօսեցէ՛ք . . . ես ձեզ հրամայում եմ: (Ականջ դնելով.) Նա լուռ է, փնթփնթում եմ ձեռքովս . . . անտանելի, անպիտան աղամարդ. այո, անպիտան Վանօ . . . լսում էք, ես ձեզ էլ չեմ սիրում, ես ձեզ արհամարհում եմ . . . Ի՞նչ էք լռուել . . . քնեցա՞ր ի՞նչ է: Վանօ . . . (Ականջ դնելով.) Լուռ եմ . . . որ այդպէս է. էլ չեմ ուզում ձեզ նետ խօսել, չեմ ուզում ձեզ լսել . . . (Բազկաթուռ մէջքը դէպի դուռն է դարձնում.) Առէք . . . դռնից անդամ ձեզ վրայ նայել չեմ կամենում . . . կը քնեմ. ես ամբողջ օրը անհանդիստ էի, բոլորովին չարարուեցայ . . . ինչեր չեն անցել մտքիցս . . . (Լացող ձայնով.) Քո պատճառով անհանդիստ եղայ, տանջուեցայ, իսկ դու . . . Աստուած քեզ հետ . . . (Լաց է լինում: Դուռը ձեռնում են, նա վեր է թռչում և հեռացնում է բազկաթուռը յողթոյ ժպետը երեսին) Ա՛, դուք վճռեցիք լուսնիւնը խորտակել . . . լա՛ւ, խօսեցէ՛ք, խօսեցէ՛ք . . . հետաքրքիր է իմանալ, թէ ինչպէս կ'արդարացնէք ձեզ . . . (Ականջ է դնում) Դուք ուղացաք բա՛նկում տարեկան հաշուի՞ պատճառով: (Ականջ է դնում) Հաշիւները մէջ սխալները էին գտել . . . սէտք էր ուղղել, սխալը գտնել . . . և այդ ձեզ յաջողեցա՛ւ . . .

Գիրեկտորները կարծում էին թէ դանձապահը նըրանց կողոպտել է, բայց բանից երևեցաւ, որ ամէն բան իր տեղն է . . . և ձեզ պարզե տուի՞ն . . . (Ականջ դնելով.) Ճշմարիտ է արդեօք, ճշմարիտ է, և ինչո՞վ կը հաստատես, թէ այդ ճշմարիտ է, թէ քեզ կարելի է հաւատալ: (Ականջ դնելով.) Ազնիւ խօսքով . . . չէ՛, չէ՛, սիրելիս, այժմ էլ քեզ չեմ հաւատում, դու փաստեր առաջ քեր և ոչ թէ դատարկ խօսքեր, խօսքեր և դարձեալ խօսքեր (Ականջ է դնում) Ի՞նչ է ասում . . . փաստերը դրան տակը կը գտնեմ . . . (Նայում է:) Այս ի՞նչ է . . . Նա դրան տակից ինչ որ թղթեր անցկացրեց: (Վերցնում է մի մեծ ծրար և դնում է:) Փողերը, երեք հարիւր ոսկի . . . թո՞ղթ պաշտօնակա՞ն թուղթ . . . այս ի՞նչ է, տակն էլ մի բան է աւելացրած . . . այդ նա ինձ համար է գրել . . . (Կարդում է.) Այս փողերը ես ընծայում եմ իմ վարդուհուն սիրտը շահելու համար որ այսօր տխուր ժամանակ է անցկացրելու: (Յանդիմանական ձեռով.) Ա՛ . . . (Վերսը ծածկելով.) Տէ՛ր Աստուած, ի՛նչպէս ամաչում եմ. նա կամենում է փողով իմ սիրտը շահել . . . ինձ փող է ընծայում, կարծես ես կարող եմ առանձին փողեր ունենալ . . . այս մինչև անգամ նախատի՛ք է . . . կը ձեռնամ իբր թէ ծրարը չեմ բարձրացրել . . . (Երբըզ գետին է դնում) Յովհաննէս, Վանօ . . . լսիր . . . ես քո փաստերը չեմ կամենում, ես չեմ վերցնի քո թողթերը, ես քեզ հաւատում եմ . . . լսում ես, Վանօ, ես քեզ առանց ապացոյցների հաւատում եմ և իսկոյն դուռը բաց կ'անեմ. տեսնում ես՝ ես քեզ

ինչքան եմ սիրում: (Սշխատելով միտը բերել բանալիի տեղը:) Բանալին ո՞րտեղ է . . . Ա՛խ. Տէր Աստուած, ո՞րտեղ ձգեցի բանալին . . . (Յատակի վրայ փնտուռւմ է:) Կարծես գետինը մտաւ . . . Ի՛նչ յիմար եմ . . . Ինչի՞ զէն ձգեցի: (Դուռը ծեծում են,) Իսկոյն, իսկոյն, իմ սիրելի, իմ Թանգազին, բանալին չեմ գրտնում . . . ես պատրաստ եմ ինձ ծեծել . . . (Վեջցնում է լամպան և նայում է բոլոր անկիւնները:) Աա՛, ահա՛, ահա իմ սիրելի, բանալին: (Համբուրում է բանալին. բարձրաձայն դրան մօտ.) Գտա՛յ, գտա՛յ . . . (Լամպը գնում է սեղանի վրայ և մօտենում է բնօր առաջը:) Իսկոյն այստեղ երկու սիրող սրտերը միմեանց հետ կը տեսնուին . . . և որովհետև ես շատ ամաչկոտ եմ՝ — միայն երեք ամիս կայ որ ամուսնացած եմ, — և չէի կամենալ քնքշութիւններ անել ամուսնիս հետ օտարների առաջ, ուրեմն խնդրում եմ, չէ՞ կարելի արդեօք վարագոյրը իջեցնել . . . (Ինտ քաշուելով ձեռքով նշան է անում գէպի վերև:) Իջեցրէ՛ք վարագոյրը, սիրելիք: (Վարագոյրը շատ դանդաղ իջնում է:) Շո՛ւտ արեք . . . (Ոտքը գետնին խփելով.) շո՛ւտ, ա՛խ, ի՛նչ անուանելի մարդիկ են.

(Վարագոյրը աւելի արագ է իջնում: Վարդուհին վազում է դէպի դուռը և ուզում է ըստ անել: Այդ միջոցին վարագոյրը բոլորովին ծածկվում է:)

II.

ՅԱՏՐՈՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԳՐՈՒԹԻՒՆ

Վ Ո Ւ Յ Ք Ի Ի Մ Վ Է Չ Է Ր

Պարս երեք պատկերով

ԳՐՈՒԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Գէվօ	Պ. Սուրբասեանց
Կէկէլ	Տ. Շամիրամ
Ղաղօ	Պ. Տէր-Գառնեանց
Անանի	Օ. Վարդուհի
Կակուլի	Պ. Աղայեանց

Լ Ի Ի Ս Ի Դ Ի Դ Ի Է

Գրամա երեք արարուածով, Թարգ. Փրանսերէնէց

ԳՐՈՒԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Դիդիէ	Պ. Աղամեան
Մարթէն	Պ. Աւայեանց
Սարգան	Պ. Սաֆրազեանց
Շամսլանի	Պ. Տէր-Գառնեանց
Լիւսի	Օ. Աստղիկ
Ալիս	Օ. Սիրանուշ

Հիւրեր, ծառաներ, եւայլն:

Սեպտեմբերի 24 ին հայ դերասանական խումբը ներկայացրեց 1) «Վո՛ւյ քի իմ վէչէր» փոշըվիւը, հեղինակութիւն հանգուցեալ Մ. Տէր Գրիգորեանցի, և 2) «Լիւսի Դիդիէ», գրամա երեք արարուածով:

Յաւելով պէտք է ասել, որ մեր տաղանդաւոր հեղինակի գործը, որնոր իւր վօղըվիւններով ու կատակերգութիւններով, կարելի է ասել, իրական ուղղութեան հիմը դրեց Թիֆլիսի հայ բեմի վրայ, շատ ու շատ անհող կերպով պատրաստուեցաւ ու խաղացուեցաւ:

Նախ և առաջ բեմը բոլորովին անյարմար տեսարաններ էր ներկայացնում. Թիֆլիսցի Մուշեթ բնակարանը մի տեսակ բանդ էր ներկայացնում, իսկ այդ տան վանդակապատ բակը գուցէ աւելի վեհեհեհեհի քան Թիֆլիսի նման էր: Իսկ խաղի մասին խօսք անգամ չէ կարող լինել. համարեա ոչ ոք իւր դերը չգիտէր, ոչ էլ նստել վեր կենալու տեղն ու ժամանակը: Բացի սորանից, Մթթօի նըշանաւոր դերը, որով հեղինակը կամեցաւ յայտնի դասի կանանց տիպարը ներկայացնել, չգիտենք թէ ինչ պատճառով բոլորովին դուրս էր ձգուել:

Յաւալի է այս բոլոր բաների վերայ երկար կանգնել, ուստի և կ'անցնինք խօսելու երկրորդ պիէսայի վրայ, որ միևնոյն օրը ներկայացուեցաւ:

Ընթերցողները մասամբ ծանօթ են «Այլ առանց համարման» դրամայի բովանդակութեանը: Եթէ յիշեալ դրամայի վրայ խօսելիս՝ կարողացանք ցոյց տալ թէ որքան հեշտ էր խաղացողներին յաջողակ դուրս գալ իրանց դերերի մէջ, այստեղ պէտք է ասենք որ «Ղիւսի Գիդիէի» մէջ դերերը աւելի ազդու լինելով խաղարկութեան տպաւորութիւնն էլ աւելի մեծ պէտք է լինէր հանդիսատեսների վրայ:

Գիդիէն գրասեղանի առաջ նստած իւր հաշիւներն է տեսնում, որոնցից երևում է որ անազին պարտքի մէջ է թաղուած և յուսահատութիւնից չէ իմանում թէ ինչ անէ: Այս դրութեան մէջ է գտնում նորան իւր կինը՝ Ղիւսին, որ կամենում է նորա տխրութեան պատճառն իմանալ. Գիդիէն, որ իւր կնոջ ներս մտնելու ժամանակ յաջողել էր հաշուեմատեանը ծածկել, յայտնում է թէ չորս կամ հինգ հազար Ֆրանքի չնչին պարտքը փոքր ինչ նեղութիւն է պատճառում իրան. բայց թէ այդ կարելի է շուտով ուղղել, և աշխատում է խօսակցութեան առարկան փոխել: Ահնր յանկարծ կրտրում է նորա խօսքը, ասելով թէ ինքը բաւական ճիշտ տեղեակ է գործերի դրութեանը և թէ բանը այնքան թեթև չէ որքան իւր ամուսինը կամենում է ներկայացնել: Այն ժամանակ Գիդիէն խոստովանում է որ մի առևտրական գործ բռնելով դը Սարզանի ընկերութեամբ մօտ չորս հարիւր հազար Ֆրանք պարտ է մնացել:

Այս հանգամանքը ամենևին չէ վրդովում Ղիւսին, որ ընտանեկան կեանքի խաղաղութեան ու բաղադարութեան համար պատրաստ է ամէն զոհողութիւն անել: Վերջին չորս հարիւր հազար Ֆրանքի ժառանգութիւնը, որ մի կողմ էր դրած իրանց մէկ հատիկ դստեր Պօլինի կրթութեան համար, նա տալիս է իւր ամուսինին, որի ուրախութեան չափը չկայ, յայտնելով միանգամայն թէ յոյս ունի ապագայում այդ գումարը իւր տեղը դնել:

Այս վիճակի մէջ են գտնուում նոցա Ամերիկայից նոր վերադարձած բարեկամները — Մարտէնը և նորա կիները: Նոցա մուտքը անասելի աղմուկ է ձեռքում Ղիղիէնների տան մէջ, աղմուկ՝ որ առաջ է գալիս նորեկ բարեկամներէ բաղդաւորութիւնից, որոնք խօսք չեն գտնում իրանց ուրախութիւնը արտայայտելու: Համբոյրների, գրկախառնութիւնների ու բացադանչութիւնների վերջ չկայ: Տիւր ու տանտէր միայն այն ժամանակ են հանդարտում, երբ բոլորը միասին նստում են ճաշ ուտելու:

Ինչ սեղան չնստած՝ պարոն և տիկին Մարտէնները յայտնում են իրանց ուրախութիւնը որ կարողացան ժամանակին գալ իրանց բարեկամների մօտ, աւելով թէ այդ օրը Լիւսիի տօնն է և թէ շատ ընծաներ են բերել Ամերիկայից: Ղիղիէն դարմանում է որ ինքը մոռացել է այդ օրը և զընում է կնոջ համար մի ընծայ առնելու: Այդ միջոցին ներս է մտնում Մարտէնի հետ եկող ծառան — Շամպանիէն, մի կոմիկական անձնաւորութիւն, որին տիկին Մարտէնը կնքել և մեծ խնամք էր ունեցել նորա վրայ: Շամպանիէն յայտնում է թէ պ. Զարբազանը (ղը-Սարգան) եկել է: Մարտէնը դուրս է գնում ճանապարհի հազուստները փոխելու: Լիւսիէն և զը-Սարգանը առանձին են մնում: Այստեղ Սարգանը յայտնում է Լիւսիին իւր ամուսինի ողբալի դրութիւնը և խոստանում է ազատել Ղիղիէին, այն պայմանով միայն որ Լիւսին անձնատուր լինի իրան: Լիւսին կարծելով թէ իւր զոհած չորս հարիւր հազար Ֆրանքով ամուսինի

գործերը կարգի են դրուելու և Սարգանի լրբութիւնից վրդովելով, հասկացնում է նորան թէ այլ ևս իշխանութիւն չունի Ղիղիէի վրայ և դրան ճանապարհն է ցոյց տալիս նորան: Այն ժամանակ Սարգանը հանում է մի մուրհակ, որից երևում է որ Ղիղիէի պարտքը չորս հարիւր հազար Ֆրանքով չէ վերջանում, և խորհուրդ է տալիս նորան մտածել իրան դուրս անելուց առաջ:

Բայց ահա Ղիղիէն գալիս է իւր կնոջ համար ընծայ բերելով մտնում է և Մարտէնը իւր կնոջ հետ:

Սարգանը իւր գործը վերջացնելով հեռանում է և բոլորը նստում են հաց ուտելու: Մարտէնը Ղիղիէի գլխին եկած զժբաղդութիւնը չիմանալով, ճաշի ժամանակ շարունակ խօսում է, պատմում է թէ ինչպէս է հարստացել Ամերիկայում և միայն ճաշի վերջերում նկատում է, որ ոչ ոք մասնակից չէ իւր ուրախութեան, ձաշը շատ տխուր կերպով է վերջանում: Նախ Լիւսին չկարողանալով իւր տանջանքները ծածկել սեղանից վեր է կենում, նորան իսկոյն մօտենում է տիկին Մարտէնը մխիթարական խօսքերով, իսկ պարոն Մարտէնը Ղիղիէին է մխիթարում:

ԱՐԱՐՈՒԱՏ ԻԻ.

Ղիղիէի տանը պարահանդէսի պատրաստութիւն են տեսնում: Մարտէնը պատմում է թէ Սարգանի և իւր կնոջ մէջ թղթակցութիւն կայ: Ներս է գալիս Շամպանիէն, որ պարապում է նամակներ տանելով ու բերելով: Մարտէնը հարցուփորձ է ա-

նում նորան Սարգանի գրած նամակների մասին և նա խոստովանում է որ Սարգանից 10 Ֆր. է ստանում այդ բանի համար: Մարտէնը պահանջում է որ նամակները իրան ցոյց տրուին և խոստանում է 20 Ֆր: Շամպանիէն ուրախ ուրախ դուրս է գնում անելով, 10 Ֆր. Սարգանից, 10 Ֆր. տ. Մարտէնից և 20 Ֆր. պ. Մարտէնից—գեղեցիկ և օգտակար գործ: Յետոյ բանից երևում է որ Սարգանը իւր նամակների մէջ դիտմամբ խօսում է իւր և Ղիւսիի մէջ եղած մօտիկ յարաբերութիւնների վրայ, և պահանջելով որ Շամպանիէն այդ նամակները Գիղիէին ցոյց տայ. յոյս ունի այդ ճանապարհով Ղիւսիին Գիղիէի աչքից ձգել և այդպէսով իւր նպատակին հասնել:

Այսպէսով Մարտէնը համոզուած է որ նամակները իւր կնոջ անունով են գրվում:

Մտնում է տ. Մարտէնը պարահանդէսի հագուստով. ամուսինը զմայլած նայում է նորա վրայ և միևնոյն ժամանակ աշխատում է մի բան դուրս քաշել նորա բերանից ստացուած նամակների մասին: Կինը ոչինչ չհասկանալով նախ ամէն բան կատակի տեղ է ընդունում, բայց յետոյ նեղանալով խօսակցութիւնը ընդհատում և դուրս է գնում: Գալիս է Գիղիէն. տխուր ու տրտում, որովհետև Սարգանի իւր կնոջ անունով գրած և Շամպանիէի միջնորդութեամբ ձեռք ձգած նամակներից նա հաւատացած է որ կինը իրան խաբում է: Ակսովում է մի բաւական կոմիկական տեսարան. Մարտէնը Գիղիէին մխիթարելով, ապացուցանում է թէ ամէն բանում ինքը Գիղիէն է յանցաւոր, թէ պէ՛տք

է գործի վրայ ուրիշ աչքով նայել և Ղիւսիին վըստահութիւն ցոյց տալ. բայց երբ մի քանի ժամանակից յետոյ Մարտէնը սկսում է կարգաւ Սարգանի նամակը, որ իբր թէ իւր կնոջ անունով է գրած, սաստիկ կտտաղում է: Յանկարծ նամակի այն տեղն է հասնում, որից պարզ երևում է թէ այն խօսքերը ոչ թէ տ. Մարտէնին են ուղղած, այլ Ղիւսիին. Գիղիէն նամակը յափշտակում է, շարունակում է կարգաւ և արարուածը աւարտվում է մի սարսափելի տեսարանով, որ շատ նմանութիւն ունի La dame aux Caméliasի մի տեսարանի հետ:

Բոլոր հիւրերի ներկայութեանը Գիղիէն վիրաւորում է իւր կնոջը և ամենաստոր կարգի կանանց հետ է համեմատում նորան: Այս տեսարանից յետոյ, Սարգանը իւր մեքենայութիւնների յաջողութիւններից խրախուսուած մօտենում է տ. Գիղիէին, յուսալով որ կը համոզէ նորան վերջին քայլն անելու. բայց գտնում է նորան ուշաթափ ընկած բազկաթուռի վրայ: Պատկեր—վարագոյրը իջնում է:

ԱՐՐՐՈՒՍԾ III.

Անցնում է մի քանի ժամանակ: Ղիւսին չէ կարող տանել այն տանջանքները որ պատճառում է նորան Գիղիէի նախանձը և միևնոյն ժամանակ չէ էլ կարող յայտնել նորան որ իւր պատիւը զոհելով իւր ամուսնի պատիւը անաղարտ պահեց: Մի խոստովանութիւն միայն Ղիւսիի կողմից բաւական էր ընտանեկան անդորրութիւնը վերականգնելու, և սակայն նա չէ կարող անել այդ խոստովանու-

թիւնը, վասնզի վախենում է Մարզանի վրէժխնդ-
րութիւնից: Այս անտանելի դրութիւնը չկարողա-
նալով տանել, խեղճ կինը բարակացաւ է ընկնում:
Զուր է աշխատում: Մարտէնը համոզել Վիդիէին
որ Ղիւսին անմեղ է. — նա ոչինչ չէ կամենում լը-
սել:

Բայց ահա ստացվում է Մարզանի վերջին նա-
մակը, որի մէջ ընտանեկան կեանքի բոլոր սրբու-
թիւնը, Ղիւսիի մայրական սէրը դէպի իւր միակ
աղջիկը (Պօլին), նորա ամուսնական սէրը դէպի
Վիդիէն, — այս ամենը ոտնակոխ է լինում: Վիդիէն
իւր կատաղութեան մէջ սաստիկ վիրաւորում է
իւր մօտ եկող Մարզանին, որ ամէն ջանք է ա-
նում որ Վիդիէն մենամարտութեան կանչէ իրան
և նորան սպանէ: Բայց այստեղ մի սարսափելի
տեսարան է բացվում, դրամայի ամենից ողբերգա-
կան րոպէն: յուսահատ մարդու պաղարիւնութեամբ
Վիդիէն դառնում է դէպի Մարզանը և մերձակորա-
պէս այս խօսքերն է ասում նորան.

Գու կարծում ես թէ ես քեզ մենամարտութեան
կը կանչեմ, ո՛չ. արիւնով անկարելի է սրբել այն
անպատուութիւնը որ դու բերիր իմ զլխին: Ոչ:
Սիրէ՛ նորան (Ղիւսին), որ իմ աղջկան մայրը լի-
նելով իմ կինը լինելով Աստուծոյ և մարդկանց
առաջ, ամուսնութեան սուրբ կապը քանդեց. իսկ
դու (դառնալով դէպի իւր կինը) սիրէ նորան (Մար-
զանին), որ բարեկամութեան սրբազան անունով
իմ տունը մտնելով և բոլոր վստահութիւնս գրաւե-
լով զրկեց ինձ իմ բոլոր հարստութիւնից և ըն-
տանեկան կեանքի բաղաւորութիւնից: Սիրեցէ՛ք

միմեանց մինչև որ ձեր խորճը սկսի տանջել ձեզ
ձեր անառակութեան համար, մինչև որ ընտանե-
կան երջանկութեան յիշատակը, որ դուք ոտնա-
կոխ էք արել, հոգեւորական ծնեցնէ ձեր մէջ:
Սիրեցէ՛ք միմեանց մինչև որ սկսիք միմեանց ա-
տել: — այն ժամանակ միայն կը սկսի իմ վրէժ-
խնդրութիւնը և այդ վրէժը սարսափելի կը լինի:

Այս վերջին հարուածը էլ չէ կարողանում տա-
նել Ղիւսին, նա մեռնում է յայտնելով Վիդիէին
իւր անմեղութիւնը, օրհնելով այն բաղաւորու-
թեան րօպէները որ առաջ ռնեցել էր իւր ամուս-
նու հետ, իսկ այժմ զո՞ն քնալով Մարզանի ցածու-
թեանը և իւր ամուսինի ու դստեր վրայ ունեցած
սիրոյ, խնդրում է Վիդիէին որ աղօթէ իւր համար
և աղջկանը չմոռանայ:

Այստեղ Վիդիէի դերը խաղացող ղերասանի
համար ամենաողժուար րօպէն է: Զգալով որ իւր
պատիւը ազատող կնոջ երեսին տուած սուկայի
անպատուութիւնները նորա մահուան պատճառ
եղան, Վիդիէն յանկարծ խելագարվում է:

Սորանով իսկապէս դրաման վերջանում է. բայց
հեղինակը մի քանի բառեր է ասել տալիս Մար-
տէնին, որ դառնալով դէպի Մարզանը բացաղան-
չում է: Սա (Ղիւսին) մեռաւ, սա էլ (Վիդիէն) խե-
լագարուեցաւ, մնացի ես որ կը սպանեմ քեզ:

Գալով քննելու ղերասանների ու ղերասանու-
հիների խաղը, պարտք ենք համարում ամենից ա-
ռաջ մի կարևոր խնդրի վրայ ուշադրութիւն դար-
ձնել:

Անտարակոյս պատահում են այնպիսի ներկայա-

ցումներ որոնց մէջ բոլոր ուշադրութիւնը դարձած է լինում մի անձնաւորութեան վրայ, որի առաջ միւս բոլոր անձնաւորութիւնները կորչում են: Այսպէս էին Քիստորին և Օլրիշը, նոր ժամանակի ամենահանճարեղ դերասանները: Վերջինը մինչև անգամ բանը այնտեղ հասցրեց, որ խաղում էր դուս խմբի հետ, որ ի հարկէ ռուսերէն էր խօսում. իսկ ինքը խօսում էր անգլիերէն յեզուով: Հասարակութիւնը իւր բոլոր ուշադրութիւնը Օլրիշի վրայ էր դարձնում, իսկ միւսների վրայ նա յում էր իբրև անելորդ ծանրութեան վրայ: Եթէ կոստանդնուպոլսեցի հիւրերը իրանց փորձառութեամբ կարող են արդարև մեր տեղական դերասաններից բարձր կանգնել, եթէ պ. Ազամեանը, օրինակի համար, իւր հմտութեամբ բեմական արուեստի մէջ կարողանում է գրաւել հասարակաց ուշադրութիւնը, դորանից չէ հետևում թէ միւսներին պէտք է անուշաղբի թողնել և գոնեա չբացատրել նոցա իրանց դերերի նշասակութիւնը:

Որքան էլ տաղանդաւոր լինի պ. Ազամեանը, նորա խաղից շատ բան է կորչում, երբ նա բեմի վրայ մնում է այնպիսի անձի հետ որ չէ լմանում թէ ինչպէս պէտք է խօսի կամ շարժէ: Պէտք է փոքր ինչ աւելի յարգել այս դերասանի տաղանդը և խնայել նորան:

Լիւսի Գիղիէի մէջ շատ մեծ և նշանաւոր դեր է Մարտէնի դերը: Գրուածի բովանդակութիւնից ընթերցողին հեշտ էր տեսնել նորա բնաւորութեան յատկանիշ կողմերը, նորա աշխուժութիւնը (որ հընար տուաւ նորան հարստանալ), վերին աստիճա-

նի սէրը դէպի մարդիկ և մանաւանդ դէպի իւր բարեկամ Գիղիէն և եթէ Մարտէնը իւր կեանքի ամենածանր րոպէներին կատակների է զիւում, այդ նորանից է բղխում որ այդ տեսակ անձնաւորութիւնները չեն կամենում և չեն սիրում շատ ախու վախ քաշել: Վերջապէս առանց այդ գրուածը քննելու էլ յայտնի է որ Փրանսիական պիեսների մէջ ամերիկացիք այսպիսի յատկութիւններով են ներկայացվում: Գոթադղաբար, ինչպէս երևում է, ոչ ոք այս բանը չբացատրեց պ. Աւալբանցին: Բոլոր ժամանակ նա մի տեսակ խեղկատակ էր ձևացնում, մինչդեռ նորա կատակները խորին հիմունք ունին: Նա ամէն տեսակ ազատութիւն էր տալիս իրան տեսադրանի վրայ, այն ինչ նա միայն բարի պիսի լինի և միևնոյն ժամանակ ամեն բան զննող: Նորա շարժուածքների մէջ ամէն բան կարելի էր տեսնել, և հայ վաճառականի գործակատար, և Թիֆլիսցի քէֆ անող լօթի, և մինչև անգամ Պէպօի Աղա Արուսիւնը, բայց ամերիկացու շարժուածքներից ոչինչ չկար: Ահա այս պատճառով նա շատ էր խանգարում պ. Ազամեանին, երբ այս վերջինի հետ մենակ էր մնում տեսարանի վրայ:

Օր. Սիրանուշը տ. Մարտէնի դերի մէջ բոլորովին յաջողակ չէր: Այն օպերէտային ձևերը, որոնց վրայ խօսեցանք նորա խաղի առիթով «Սէր առանց համարման» պիէսում, սաստիկ խանգարում էին նորան տ. Մարտէնի դերի մէջ:

Նախ և առաջ երբէք ամերիկացի կինը չի ճանապարհորդել այն հազուստով որով նա դուրս եկաւ: Մի տեսակ peignoir, որի գոյնը երեկոյեան

լուսով կեդտոտ էր երևում, ճանապարհորդական իրեղէններ, որոնցով գուցէ միայն Նիմնիի տօնա-վաճառը կարող են գնալ մեր թիֆլիսցի վաճառա-կանները — այս բոլորը ամենին նպաստաւոր չէր օրիորդի համար. իսկ այնուհետև նորա շարժուածք-ները, որոնք երիտասարդ տիկնոջ շարժուածքների ամենին նման չէին, բոլորովին խանգարեցին նո-րան իւր թէև փոքրիկ, բայց գրաւիչ դերով տպա-ւորութիւն գործել հասարակութեան վրայ:

Օր. Աստղիկը Լիւսիի դերի մէջ նոյն արժանա-ւորութիւնները ցոյց տուեց ինչպէս և Կոմսուհու դերի մէջ: Աէր առանց համարման պիէսում: Իւր ետհականութիւնը և աշխատասիրութիւնը, իւր դէմ-քի բացատրութիւնը, որով նա գիտէ արտայայտել սրտի զգացմունքները, միջոց տուին նորան յաջո-ղութեամբ անցկացնել ամբողջ դերը: Եթէ մի քա-նի թերութիւններ չնկատուէին նորա հագուստի մէջ և մի քանի թեթև պակասութիւններ չարժ-մունքների մէջ, որոնք ներկայացուած դերի բնա-ւորութեան հակառակ են, նա կարող էր արժանա-ւոր կերպով խաղալ պ. Ադամեանի հետ, որին խա-ղարկութեան ամբողջութեան համար օրինաւոր գերասանուհի է հարկաւոր:

Գալով պ. Ադամեանին, մենք կարող ենք միայն ասել որ հասարակութիւնը ամենայն իրաւամբ բուռն ծափահարութիւններով ընդունեց նորան և խաղի վերջում մի քանի անգամ դուրս կանչեց:

Առաջին գործողութիւնից սկսած՝ ուր նա ան-պայման սէր է ցոյց տալիս իւր կնոջը և մինչև վերջը նա զարմանալի կերպով արտայայտում է իւր

զգացմունքների նրբութիւնները: Այն տեսարանը որի մէջ նա իւր տանը պարահանդէսի ժամանակ իւր կնոջը հիւրերի ներկայութեանը վիրաւորում է և «Միրեցէ՛ք միմեանց մենախօսութիւնը. շատ լաւ անցան. բայց առանձին զովասանութեան արժա-նի է մանաւանդ այն ճարտարութիւնը որ մեր տա-ղանդաւոր դերասանը ցոյց տուեց խելագարու-թեան տեսարանի մէջ: Մարսափելի ծիծաղը — ծի-ծաղ դժբաղդութեան, որին յանկարծ հետևում է փոփոխութիւն աչքերի հայեացքի և երեսի գոյնի մէջ, զէմքի ալլայլութիւնը և մինչև մատների շարժ-մունքները. — այս բոլորը, եթէ կարելի է այսպէս ասել, ուղղակի բնութիւնից է առած. Մինչև ան-գամ մի բծիչկ, որ խաղարկութեանը ներկայ էր, հաւատացնում էր թէ ճիշտ նոյն շարժմունքները նկատել է խելագարների մէջ:

Մի բան միայն կարող ենք ասել, որ այն բա-ցազանչութիւնը որ նա արձակեց երբ կնոջը մե-ռած տեսաւ, փոքր ինչ անբնական էր, բայց այդ լոկ մի պատահմունք էր:

Տեղական դերասաններից պ. Աւայեանցի վրայ արդէն խօսեցանք: Պ. Սաֆրազեանցի համար կա-րելի է ասել որ նա իւր բէր շնորհէջ, և այս արդէն մեծ արժանաւորութիւն է նորա համար, վասնզի բնութիւնը մի մեծ պակասութիւն տուաւ նորան, որից նա չէ կարող ազատուիլ բեմի վրայ: Երբ նա խօսում է, բոլոր բառերը միմեանց հետ ձուլվում, խառնվում են, այնպէս որ կարծես թէ բերանը մի տեսակ չորտալ լիքն է:

Պ. Տէր Գաւթեանցը բաւական կոմիկական էր

Շամպանիէի դերում: Մի բան միայն կարելի է ասել որ, ինչպէս երևում է, նա շատ վատ է ածիլվում, որովհետև նորա թշերի սեռութիւնը ոչնչով չէ կարելի ծածկել, գոնեա այդպէս էր նա Շամպանիէի մէջ:

Այս առիթով հարկաւորութիւն ենք համարում խորհուրդ տալ ընդհանրապէս բոլոր դերասաններին, որոնց հետ և պ. Աղամեանին, փոքր ինչ ասելի ուշադրութիւն դարձնել դերասանի արտաքին կողմերի վրայ, որպիսի են հագուստը, սանտրուելու եղանակը, երեսի գոյնը և այլն: Այս բաների վրայ եթէ մինչև այժմ լռեցինք, լոյս ունէինք որ առանց մեզ էլ նկատելի կը լինին, բայց դժբաղդաբար մինչև այժմ էլ այդ պակասութիւնները դեռ շարունակվում են:

«Մշակ» լրագիրը մինչև այժմ բոլորովին լուռ է մնում թատրոնի վրայ, այնպէս որ լրագրութեան կարծիքները առաջ բերելիս՝ մենք պէտք է բաւականանանք «Մեղուի» խօսքերով, ի հարկէ ռուս թերթերն էլ երբեմն իրանց կարծիքները յայտնում են. բայց այս վերջինների վրայ մենք յոյս ունինք առանձին խօսել, որովհետև հարկաւոր է մի քանի բացատրութիւններ տալ այն ուղղութեան վրայ որով նոքա գրվում են:

Պիէսի բովանդակութիւնը պատմելուց յետոյ, պ. Իւնիուսը ասում է.

«Թաղը առաջին գործողութեան մէջ փոքր ինչ զանգաղ և թոյլ էր, իսկ երկրորդ մասնաւանդ երրորդ գործողութիւնը անցաւ շատ լաւ. Այսինչ այնինչ պակասութիւնները միւս կողմը դրած ամ-

բողջութիւնը լաւ էր: Պ. Սաֆրազեանը (Սարգան) իւր դերումը շատ համեստ էր և շատ ամօթխած, վախենում էր, որ հասարակութիւնը նրան չատէ: Հասարակութիւնը որչափ նրանից զոռէ կ'ընչանակէ այնչափ նա լաւ է խաղում իւր դերը: Պ. Սաֆրազեանը ամաչում է իւր դերից, այդ ի՞նչ չինականութիւն է, ամաչել մի դեր բեմի վերայ ներկայացնելուց. այն ինչ որ կարելի է մեղանում առանց ամաչելու կեանքումը կատարել: Պ. Աւալեանցը (Վարթէն) իւր դերը յաջող կատարեց, հարկաւոր է սալօնի ձեերը իւրացնել և քանի կարելի է բառերը մեղմ և կակուղ արտասանել: Օր. Սիրանուշը (Ալիս) իւր դերում շատ բնական էր և կենդանի. թէ ծիծաղել ուրախանալը և թէ տըրտմել լաց լինելը նա շատ լաւ հասկանում է: Պ. Տէր Դաւթեանցը (Շամպանիէ) կատարեալ էր իւր դերումն, ասելի լաւ խաղալը մեր բեմի վերայ մենք առայժմս իրաւունք չունենք պահանջելու: Օր. Աստղիկը (Լիւսի) մեր առաջին դրամատիկական դերասանուհին է մեր բեմի վերայ: Դորա խաղի մասին մասնաւոր խօսելն ուրիշ անգամ, թողնելով պէտք է ասնք, որ իւր դերը զնալով ասելի կենդանացնում և ասելի լաւ էր խաղում և վերջին գործողութեան մէջ թէ զեղեցիկ էր և թէ կատարեալ նորա խաղը: Պ. Արամեանը (Դիդիէ) ցոյց տուաւ իւր դերումը որ ինչ որպէս որ դերասան է և որպէսզէր դորա հոյս որքան բնական է դառնել և ելէ նախնայ իտրոյ է շատ ասաջ գնալ իւր որպէսի մէջ: Սէն վախենում էին, որ նա չանկարծ հեծնելով, այդ դժուար դերումը, չծիծաղացներ հասարակութեանը — Էայդ հասարակութեանը լոյս էր լինում: Պ. Աղամեանը ևրբ

լացից վերջը գփվում է և սկսում է ծիծաղել, այնպէս փոխվում է մեր առջևը մի քանի րոպէի մէջ, որ մենք նորա կերպարանքի մէջ տեսնում ենք միմեանց մօտ դրած հոգւոյ համոզմունքները, զգացմունքները աւերակ: Եւ մենք նայում ենք նորա վերայ ինչպէս մի հնութիւնից մնացած շքեղ պալատի տխուր աւերակների վերայ, և յիշում ենք նոցա փառաւոր անցեալը, ցաւում ենք, խղճում ենք:»

Մեր պարտաւորութիւնն էր հարկաւ ցոյց տալ այս հայեացքի և մերինի մէջ եղած տարբերութիւնը. բայց մեզ թվում է թէ մեր կարծիքների հաստատութեան համար առաջ բերած բացատրութիւնները այնքան պարզ են, որ աւելորդ է համեմատել նոցա պ. Իւնիուսի եզրակացութիւնների հետ: Մի բան միայն բոլորովին անհասկանալի է թվում մեզ. եթէ ընթերցողը ուշադրութիւն կը դարձնէ պ. Աղամեանի մասին յայտնուած կարծիքի վրայ, անշուշտ այդ կարծիքը քիչ շատ դարմանալի կ'երևայ նորան: Այդպիսի խրախուսական խօսքեր գուցէ միայն ջանասէր աշակերտին կարելի է ասել. «Ապրի՛ս, տղաս, եթէ շարունակես այսպէս աշխատել, անշուշտ յաջորդ դասատուները կ'անցնիս»

Նոր սկսող դերասանին կարելի է արգարև այս տեսակ քաջալերիչ խօսքեր ասել. իսկ փորձառու դերասանին, որ այնքան տաղանդ և հմտութիւն է ցոյց տուել բնական արհեստի մէջ, բոլորովին անտեղի է այսպիսի տողեր կարդալ:

Ուր թողնենք և այն որ վերոյիշեալ կարծիքի մէջ

մի տեսակ հեղնութիւն է երևում, ինչպէս որ ընթերցողը կարող է դատել հետեալ երկու հակադիր հասկացողութիւններից. մէկ կողմից յօղուածագիրը ասում է թէ «Աղամեանը տաղանդաւոր դերասան է և արհեստը դորա մօտ արդէն բնութիւն է դառել», իսկ միւս կողմից վախենում է որ նորա խաղը հասարակութեան ծիծաղը չչարժէ և միայն խաղը հասարակութեան ծիծաղը չչարժէ և միայն այն ժամանակ համոզվում է թէ նա տպաւորութիւն է գործում հանդիսատեսների վրայ, երբ տեսնում է որ «հասարակութիւնը լաց է լինում»:

ԹԱՏԵՐԱՍԵՐ

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻՆ*

1) Խոնարհաբար խնդրում եմ մեր թատրոնական կոմիտեայից չնայել Ռիչելիօյի և Հէնրի VIIIի վերայ, ինչպէս Պէպօյի և Չամբախովի և սոցա նմանների վերա: Եթէ վճռված է որ վերջինները էլի պիտի երևան մեր բեմի վերայ թո՛ղ նոքա երևին, ինչպէս կուղէ դերասանը, ինչպէս նորան ձեռնտու է, բայց Լիւդովիկոս XIII ժամանակակից մինիստրներին և պետական կառավարող կանանց յիշատակը և բնական դիրքը այլանդակել, նշանակում է արհամարհել բեմի պահանջմունքները: Անտանելի է բարբոսն զը Լօրմի հագուստը, նմանապէս անվայելուչ էր և Իւլիայի հագուստը, որ չէր կոճկուած

* Տես «Մեղու» № 76:

1001
565

ինչպէս հարկն է, դա դերասանուհւոյ մեղքը չէ, քանի որ նա իւր մէջքի կոճակները տեսնել չէ կարող: Գուքքը և կոմսը կարգից դուրս աղտոտ և ստոր ծառանների շորեր ունէին հագած. «Ինչէլիօ-յի» գաղափարի մեծութիւնը, ժամանակի շքեղութիւնը և գործող անձանց բարձր դիրքը մեր բեմի վերայ երևեցան իբրև մի ստորերկրեայ պանդոկների հերոսների դիրքը: Միմիայն պ. Ադամեանն էր, որ պահպանեց իւր դերի միտքը պատշաճ հագուստով:

Անտանելի է այդպիսի անճաշակ հակասութիւնը բեմի վերայ և իսկ այդ բանը թող գրաւէ կոմստեփի ուշադրութիւնը: Ուշադրութեան է արժանի և այն բանը որ լաբորանտին խումբը չունի բեմի ստորերկրեայ պանդոկի անհամարանէ և որ մի քանի դերասաններ չայլել, միմեանց ծոփեմու, միմեանց փրփել անգամ չէն նարդուտում: Ըստ մեծի մասին դերերը չգիտեն, իւր ժամանակին բեմ չեն դուրս գալիս, իւր ժամանակին չեն խօսում, այդ բեմական մեծ պակասութիւնները մեռցնում են տեսարանը, կորչում է ամբողջութիւնն, և աղաւաղում են մեր ամբողջ արարչութիւնը: Այդ ամենի վերայ իրաւարարում ենք և խնդրում ենք կոմստեփի ուշադրութիւնը:

2) Խոնարհաբար խնդրում ենք օր. Սիրանուչին, որ նա բարեհաճի դարձնել իւր ուշադրութիւնը իւր երգեցողութեան վերայ: Նախ և առաջ պիտոյ է ասել, որ կոնցերտ-երգիչը կարիք չունէ աւելորդ շարժումներ անել: Այդպիսի հայ կոնցերտ երգիչ օրիորդը պարտաւոր է կանգնել բեմի վերայ այնքան համեստ և անկեղծ, որպէս դա արժան է և յատուկ Հայրենիքի զարնան վսեմ գաղափարին

և երգիչ օրիորդի անձնաւորութեան: Գալով օրիորդի երգելուն ուրախութեամբ պիտի լինենք որ ձողովորդը մեծ համակրութիւն ցոյց տուեց դէպի օրիորդի երաժշտական ընդունակութիւնը: Բայց և այնպէս մի երկու բարեկամական խօսքեր այստեղ աւելորդ չեն լինիլ: Չայնը քաղցր է և ունի ինչպէս կասեն ամբար միմիայն, նորա ստոր խողերը մինչև ի ս ո լ առաջին կարգերումը լսելի չեն, միջին խողերը դողդոջուն են իսկ բարձրները մենք դեռ չենք լսել կարծում ենք, որ նոքա չեն մշակուած: Հետեւում է այստեղից որ օր. Սիրանուչի ձայնը երաժշտական օրինաց համեմատ մշակուած չէ, որոյ վերայ հարկաւոր է դարձնել ուշադրութիւն. քանի որ օրիորդը մեծ երաժշտական ընդունակութիւն և զարդացած լսողութիւն ունի: Այդ նպատակին հասնելը Տիլիստում շատ հեշտ է քանի որ այստեղ երգեցողութեան դասերը շատ արժան են:


3) Խոնարհաբար խնդրում ենք միւս դերասաններից բացի պ. պ. Ադամեանից և Մանդէնեանից, որ նոքա սովորեն իւրեանց դերերը և ուսումնասիրեն բեմը հմուտ դիտեցողներից: Ի սէր Աստուծոյ մեր բեմը և Լուդովիկոսներին նմանացրեց միանգամայն Շապուհին, սարսափելի խայտառակութիւն է դա:

4) Խնդրում ենք պ. Տրուֆիից, որ նա իւր պաշտօնը կատարէ ըստ պատշաճոյն, թէ չէ, օրկեստրը շատ անգամ ածում է առանց դիրժեօրի. դա ևս երաժշտական խայտառակութիւն է:

Մեզ փոքր ինչ զարմանալի է թվում այն տարա-
ձայնութիւնը որ երևում է «Մեղու Հայաստանի»
լրագրի Հայկական թատրոնի մասին յայտնած կար-
ծիքների մէջ. Միևնոյն թերթի մէջ ղետեղուած էր
մի Ֆէլիէտօն վերտառութեամբ՝ Mon père, par
où faut-il que je commence? Tu m'as répondu. Mon
fils, — par la clémence. և միևնոյն ստորագրութեամբ
հրատարակվում է արտատպած յօդուածը, որի մէջ
ամենեւին ներողամտութիւն չէ երևում:

Մեր կարծիքով նոտրագիր տողերը մանաւանդ
չափազանց խիստ են, վասնզի քիչ խումբ կը վրնի
որ մերինի պէս շատ աչխատի և եթէ միջ չէ յա-
ջողում մի անթերի ամբողջութիւն տեսնել կամ
դուքսի դերի մէջ մի տեսակ Կալալ—Ղաղօ ենք
տեսնում,— այդ անշուշտ արուելու է մեր քաղա-
քի ստորին դասի կեանքի ազդեցութեանը, որից
շատ դժուարութեամբ կարող է ազատուիլ թատրո-
նական բեմը: Բայց թողնենք մերը, նոյն իսկ ուռ-
սաց բեմի համար, որ 102 թատրոն ունի, չեն կա-
րող գտնել այնպիսի դերասաններ որ վայելուչ ձե-
ւեր ու շարժումները ունենան. ուրեմն և զարմա-
նալի չէ ամենևին որ թատրոնական մասնաժողովը
հնար չէ գտնել այնպիսի դերասաններ հանել բե-
մի վրայ որպիսիները ցանկանում է տեսնել պ. Ս. Ու.

Թէպէտ պ. Ս. Ս. քննած խորհրդների մեծ մա-
սին համաձայն ենք մանաւանդ որ մենք էլ այդ
բաների վրայ գրել ենք այնուամենայնիւ հարկա-
ւոր ենք համարում մի անգամ էլ յիշեցնել «Մե-
ղուին» իւր Ֆէլիէտօնի գլխին դրած նշանաբանը.
Mon père, par où faut-il que je commence? Tu
m'as répondu. Mon fils, — par la clémence.



Մամուլի տակից դուրս են եկել ԻՇԽԱՆ
Մ. ԲԷՀԲՈՒԹԵԱՆՅԻ Հրատարակութեամբ
և վաճառվում են բացառապէս ԿԵՆՏՐՕ-
ՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՍՈՒԱՆՈՅՈՒՄ «ՀԱՅԿԱ-
ԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ» հետևեալ համարները.

- Ա. ՎՈՒՅ ՔԻ ԻՄ ՎԷՉԷՐ. Փարս
երեք պատկերով Մ. Տէր-Գրիգո-
րեանցի..... 40 Կ.
Բ. ԲԷՔԵՐ ԲԻՉՈՒ ՀԱՆԱԲԸ. օպե-
րետա մի գործողութեամբ..... 25 Կ.
Գ. ԱՇՆԱՆԱՅԻՆ ԵՐԵԿՈՅ ԳԻՒՂՈՒՄ
ՎՕԴՐՎԵԼ Մէկ արարուածով..... 25 Կ.
Դ. ԲՈՆԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ. կովե-
զիա մէկ արարուածով..... 40 Կ.
Ե. ԺԱՆՅՈ ԵՒ ԺԱՆԷՏ. օպերա-վՕԴՐ-
ՎԵԼ մէկ գործողութեամբ..... 40 Կ.
Զ. ՊԱՌԻՆԵՐՈՒՆ ԽՐԱՏ. ՎՕԴՐՎԵԼ
մէկ արարուածով. Տէր-Գրիգո-
րեանցի..... 50 Կ.
Է. ՏԻԿԻՆԸ ՆՐԱՆ ՍՊԱՍՈՒՄ Է..... 30 Կ.
Ը. ԱՆԱՆՈՒՆ ԿԱՏԱԿ..... 40 Կ.

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Գ. ՉՄՇԿԵԱՆՅԻ ԵՒ Ս. ՊԱԼԱՍԱՆԵԱՆԻ:

Գ Ի Ն Ն Է 30 Կ.

3448

2013

